# ԳԱՐՈՒՆ ԵՐԵՒԱՆ

*Խօսք՝ Աշոտ Գրաշի*
*Երաժշտ.՝ Արամ Խաչատուրեան*

Գարուն Երեւան, սիրուն Երեւան
Վարդեր ես ճամբիս փռում Երեւան,
Ուր էլ գընամ ուր էլ մնամ,
Քեզ եմ յաւիտեան սիրում, Երեւան:
Իմ ժողովրդի վառ աչքերի լոյսն ես, Երեւան,
Իմ Հայաստանի զարդն ես, Երեւան:

Զուգուել, զարդարուել, սիրուն աննման,
Դու նորահարս ես դարձել, Երեւան,
Հայրենական գարնան գրկում,
Ծաղկի՛ր, ծիծաղիր, երգիր, Երեւան:
Իմ ժողովրդի վառ աչքերի լոյսն ես, Երեւան,
Իմ Հայաստանի զարդն ես, Երեւան:

Երգը շրթունքիս, կռիւ գնացի,
Քո կեանքի համար, անվախ կռուեցի,
Կրակ կռւում, կրակ հեռւում,
Պատկերիդ պայծառ կարօտ մնացի:
Իմ ժողովրդի վառ աչքերի լոյսն ես, Երեւան,
Իմ Հայաստանի զարդն ես, Երեւան: